

է նետուում, բախուում երկնքին եւ ոգիներ արթնացնում: Հրեշտակների թեւերի սօսափիւնը բոլոր ձայները ծածկում է, եւ ամբողջական կեանքի զգացումը տաւղահարում է գերազոյն ուրիշ: Կեանքը գերազանցապէս արարողական է:

Ամէն ինչ դոյութիւն ունի եւ ամէն ինչ կապուած է տիեզերքի հետ: Հոգին դրսեւորում է խորհրդանշանների մի շարք, որոնք դեկավարում են աշխարհը եւ ուղղութիւն տալիս մարդկութեան: Պաշտամունքը զգեստաւորում է հոգիների ոսկեզօծ պատմութեաններով, գըլխին աղամանդէ խոյր է դնում, լոյսերի գօտի է հազնում, զարդարում է բոլոր այն ծաղիկներով, որոնք ընդունելի են երկնքի համար եւ թափորով անցնում է անհունի միջից:

Եւ ինչպէս միշտ, ոտքերը քարշ տալով, թափորին հետեւում է աչազուրկ եւ աղքատամարմին ամբոխը, որին աստուածային խենթութիւնը չէ այցելած եւ որի ոտքերը կապար են ու ձեռքերը հողի մէջ թաթախուած: Այդ, ամբոխը օրէ օր մեծանում է, շատանում ու մի օր էլ թափորին արգելք հանդիսանում: Ու ճակատագրական պատմական դիպելկտիկան մշակոյթը վեր է ածում քաղաքակրթութեան:

Մարդկային անհատը սկսում է տարակուսիլ իր մասին եւ բոլոր այն արժէքների մասին, որոնք իր հոգեկան կեանքի հիմքն էին կազմում: Նա լքում է ազատութեան անծայր դաշտը եւ քայլ առ քայլ մտնում է գերութեան մարզի մէջ: Գործարանական շրջանը կամաց կամաց վերջ է առնում եւ ամէն ինչ փլուում է: Մարդը գտնում է բանականութիւնը եւ միեւնոյն ժամանակ նիւթականը: Հաշիւ է անում $2 \times 2 = 4$: Կշուում է, չափում եւ դառնում է ինչպէս մի կոյր, որը պէտք ունի առարկաները շօշափելու, ձեռքի մէջ առնելու, որպէսզի նրանց դոյութեան մասին համոզում կայացնէ:

Ահաւասիկ, մենք բնապաշտութեան շրջանում: Երկնքին կոնակ ենք դարձնում: Որոնում ենք, եւ այնպէս է թւում, որ ամէն ինչ գտնում ենք: Գործարանական շրջանից կեանքը անցնում է քննադատական շրջանը: Ապրելու անյադ ցանկութիւնը վերաքննում է բոլոր արժէքները, խզում կապերը եւ լինելիութեան նոր կարելիութիւններ որոնում: Մարդը փնտ-

ռում է հաճոյքը, նիւթական կեանքի դիւրին վայելքները, երջանկութիւնը:

Իր տիեզերական բնոյթից «ազատագրուած» մարդը փակուում է իր մէջ եւ ուզում է կազմակերպել իր լինելիութիւնը բնապաշտական կերպով: Որոնում է ընկերային կեանքի հիմքերը եւ բաւարարում է նիւթապաշտ տենետեանութիւնով: Ուսումնասիրում է իր հոգին եւ իր մարմնի նոյնանման տուեալներն է գտնում: Նիւթից եւ մարմնից դուրս, ուշադրութեան արժանի նա ոչինչ չի տեսնում: Ապրել, իմա՝ քար տաշել, փայտ կտրել, երկաթ դարբնել, իրեր ժողովել, կերակուր աւելցնել, գուղուել, ստամոքսը ինամել:

Նեղլիկ, ճոռան մի դուռ է բացում, եւ մարդը, համաշխարհայինը լքած, մտնում է անհատականութիւնից ներս: Մակերեսային անհատականութիւն, պետութեան, ընկերութեան, տնտեսական պայմանների եւ իրերի դերի, որը այլեւս չի լսում անհունի թեւածուծը եւ մնում է միայնակ, քանդուած տան շէմի առջեւ կուչ եկած կարիճի նման: Անձնաւորութիւնները, հրաշքները եւ սուրբերը այլեւս դոյութիւն չունին:

Ու բնութիւնն իսկ փոխում է իր կերպարանքը:

Մշակոյթային շրջանում երկիրը, հողը, հանդիսանում է իբրեւ կենդանի, կերպընկալ մի դոյութիւն, ուր բոլոր փթթումները կարելի են դառնում: Հողը անարատ է, մեղքից դուրս: Բնութեան տեսարանների առջեւ միջնադարեան սրբերը ծոնկի են գալիս եւ պաշտում: Հրաշքներ են տեղի ունենում: Ման են գալիս ոտաբոսիկ, որպէսզի աւելի լաւ դզան ոտքերի տակ բարխոյղ եւ ապրող գետինը ու սրտերը տրոփում են, արիւնը դալարում է դաշտերի եւ լեռների ծածուկ լինելիութեան հետ միասին:

Քաղաքակրթութիւնը բնութիւնը նիւթի է վերածում: Անհողի, կեանքից դուրկ, կերպընկալութիւնից դուրկ մի բան, որի մէջ երեւութապէս շարժումի սկզբունքն են փնտռում: Կեանքը մեքենայացրած է: Երկաթը երկրաչափական ձեւեր է առնում եւ մարդկային թեւերին երկայնութիւն է տալիս: Հողի հետ հազորդակցութիւնը կորած է. մեքենաների դըր-